ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/5.1-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. ապրիլի 1-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N 2-ի 5.1 կետով նախատեսված **«Միջազգային միջոցառումների կազմակերպում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- Ծրագրի հավելված N 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման իրականացման համար՝ «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրի ընթացքն ապահովելու նպատակով Հանձնաժողովի 2024թ. մարտի 27-ին կայացած նիստի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ

Ծրագրի հավելված N2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման իրականացման համար՝ «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է գրություն, ներկայացնելով Հանձնաժողովի առաջարկները պայմանագրի կնքման նպատակով:

Մասնավորապես,

առաջարկվել է պայմանագրի նախագծի N1, N1.1 և N5 հավելվածներով նախատեսված կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները, ինչպես նաև ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանով հաստատված N2 հավելվածի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման վերստուգելի չափանիշներին՝ նախատեսելով ոչ միայն «**առնվազն երկու միջազգային միջոցառման կազմակերպում»** դրույթի, այլև «**Միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակցության ապահովում»** դրույթի առկայությունը: Միաժամանակ առաջարկվել է ծրագրին համապատասխան վերանայել կազմակերպության ներկայացված ֆինանսական նախահաշիվը՝ առանց մյուս արդյունքային ցուցանիշների և վերջնական գումարի փոփոխության:

Ի պատասխան վերը նշված առաջարկների կազմակերպությունը էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է իր դիրքորոշումը՝

Մասնավորապես՝

հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակցության ապահովում» դրույթը ի սկզբանե նախատեսված չի եղել և այն իրականացնելը կպահանջի հավելյալ աշխատանք և ռեսուրս, կազմակերպությունը հրաժարվում է ընդունել Հանձնաժողովի առաջարկը:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Հաշվի առնելով «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված տեղեկատվությունը դադարեցնել Ծրագրի հավելված N2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման իրականացման նպատակով «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի հետ պայմանագրի կնքման գործընթացը:

3. Ծրագրի հավելված N2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով հայտարարված և ամփոփված մրցույթի արդյունքները համարել չեղյալ, մրցույթը Armeps համակարգում լուծարել և հայտարարել նոր մրցույթ:

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան - _____
(հանձնաժողովի նախագահ)

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Ա.Սողբաթյան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Պետրոսյան - _____

Շ.Հովսեփյան - _____